

**Արևելյան գործընկերության տարածքային  
համագործակցության  
ծրագրերի ռազմավարություն**

**Բովանդակություն**

1.	Ներածություն.....	2
2.	Նպատակներ .....	2
3.	Աշխարհագրություն.....	2
4.	Գերակայություններ, գործառնական նպատակներ և ինդիկատիվ համատեղ գործողություններ.....	3
5.	Թիրախ խմբեր.....	5
6.	Ֆինանսական շրջանակ.....	6
7.	Ծրագրի կառավարման մարմիններ.....	6
7.1	Համատեղ գործառնական ծրագրեր (ՀԳԾ-ներ) .....	6
7.2	Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողով (ՀՈԸՀ).....	7
7.3	Իրականացնող մարմին (ԻՄ).....	8
8.	Ժամանակացույց. 8	
9.	Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության աջակցության ծրագիր 8	

## 1. ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

2011թ.-ի մայիսի 25-ին արված <<Նոր պատասխան փոփոխվող հարևանությանը>> համատեղ հայտարարության<sup>1</sup> մեջ Արևելյան գործընկերության երկրների միջև միջսահմանային համագործակցությունը նշվում է որպես տարբեր շրջանների միջև տնտեսական զարգացման անհամաչափությունները հաղթահարելու և բոլոր երկրներում կայուն կերպով կյանքի որակը բարելավելու կարևորագույն գործիքներից մեկը: Արևելյան գործընկերության (ԱԳ) երկրների միջև տարածքային համագործակցությունը նպաստում է տարածքային զարգացման փորձնական ծրագրի իրականացմանը (S2ՓԾ), ինչպես նաև ԵՄ կողմից ֆինանսավորվող մյուս միջոցառումներին, որոնք խրախուսում են տնտեսական և սոցիալական անհամաչափությունները նվազեցնելու և տարածքային (հետևաբար նաև ազգային) տնտեսական պոտենցիալ<sup>2</sup> իրացնելու՝ ռազմավարության վրա հիմնված, ներառական մոտեցումների կիրառմանը: 2011թ.-ի սեպտեմբերի 29-30-ին<sup>3</sup> Վարչավայում տեղի ունեցած Արևելյան գործընկերության գագաթնաժողովի համատեղ հռչակագրում մասնակիցները կարևորեցին բազմակողմ համագործակցությունը՝ նշելով, որ Արևելյան գործընկերությունը կարող է նպաստել համագործակից երկրների միջև առավել սերտ հարաբերություններ հաստատմանը:

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի (ԵՅԳԿ) 2010-2013թթ.Տարածաշրջանային Արևելք ծրագրի ռազմավարական փաստաթղթում և 2010-2013թթ. Ինդիկատիվ ծրագրում համագործակից երկրների միջև տարածքային համագործակցությունը նշված է որպես Գերակա ոլորտ 2-ի՝ <<Տնտեսական զարգացման>> ենթազերակայություններից մեկը: Այս համատեքստում Եվրոպական հանձնաժողովը (ԵՅ) 12.5 միլիոն եվրո է հատկացրել ԱԳ երկրների միջև երկկողմանի տարածքային համագործակցության ծրագրերի իրականացման համար (Հանձնաժողովի կիրարկվող որոշում C (2013) 8293՝ ընդունված 22.11.2013թ.-ին):

Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրերի այս ռազմավարությունը, որը մշակվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից համագործակից երկրների հետ խորհրդակցությունների արդյունքում, ներկայացնում է Ուկրաինայի և Բելառուսի, Մոլդովայի և Ուկրաինայի, Վրաստանի և Հայաստանի, ու Վրաստանի և Ադրբեջանի, միջև իրականացվելիք, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող տարածքային զարգացման ծրագրերի գերակայությունները, ներառման ենթակա շրջաններին ներկայացվող պահանջները, թիրախ խմբերը, ֆինանսական շրջանակը և կառավարման մարմինները:

<sup>1</sup> COM(2011) 303 final, 25.5.2011

<sup>2</sup> SWD(2012) 109 final, 15.5.2012

<sup>3</sup> Council of the European Union, 14983/11, 30.09.2011

Այս Ռազմավարությունը սահմանում է տարածքային համագործակցության միջոցառումների նախապատրաստման և իրականացման շրջանակը:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐ

Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել ծրագրին մասնակից սահմանամերձ շրջանների (տե՛ս կետ 3-ը) միջև կայուն տարածքային համագործակցության հաստատմանը, որն ուղղված է այդ շրջանների սոցիալական և տնտեսական զարգացման խթանմանը: Անմիջական նպատակն է ամրապնդել միջսահմանային կապերը տեղական իշխանությունների, համայնքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև՝ օգնելով մշակել համատեղ լուծումներ վերոնշյալ շրջաններում սոցիալական և տնտեսական զարգացման ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու համար:

## 3. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրերը ներառելու են հետևյալ տարածքային միավորները՝

- **Ուկրաինա-Բելառուս** ծրագիր  
Բելառուս: ԲրեստիևԳոմելիմարզեր  
Ուկրաինա. Վոլինի, Ռավնոյի, Ժիտոմիրի, Կիևի և Չեռնիգովի մարզեր
- **Մոլդովա-Ուկրաինա** ծրագիր  
Մոլդովա. ողջ երկրի տարածքը  
Ուկրաինա. Չեռնովցիի, Վիննիցայի և Օդեսայի մարզեր
- **Վրաստան-Հայաստան** ծրագիր  
Վրաստան. Սամցխե-ՋավախեթիևՔվեմո-Քարթլիերկրամասեր  
Հայաստան. Ծիրակի, ԼոռուևՏավուշիմարզեր
- **Վրաստան-Ադրբեջան** ծրագիր  
Վրաստան. Քվեմո-Քարթլի և Կախեթի երկրամասեր  
Ադրբեջան. Գանջա-Ղազախ և Ծեքի-Չաքաթալա տնտեսական շրջաններ

## 4. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԻՆԴԻԿԱՏԻՎ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԳ Տարածքային համագործակցության ծրագրերն ուղղված են Համատեղ գործառնական ծրագրերում (ՅԳԾ-ներ) մանրամասնեցված տեղական զարգացման կարիքների լուծմանը: Մասնակից երկրները իրենք կսահմանեն ծրագրերի գերակայությունները՝ ելնելով իրենց աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, մշակութային և բնապահպանական իրավիճակից: Այդ գերակայությունները իրենց արտահայտությունը կգտնեն տեղական գործընկերների միջև միջսահմանային փոքրամասշտաբ ծրագրերի մեջ, որոնք կընտրվեն ծրագրերի հայտ ներկայացնելու հայտարարությունների արդյունքում:

Ստորև ներկայացված Է գործառնական նպատակների, գերակայությունների և համատեղ գործողությունների ինդիկատիվ և ոչ-սպառնիչ մի ցանկ: ԱԳ Տարածքային համագործակցության ծրագրերը կարող են չներառել դրանք բոլորը: Դրանցում պետք է ներառված լինեն այն ընտրված գերակայություններն ու գործողությունները, որոնք մասնակից պետությունները նախատեսում են իրականացնել իրենց ՅԳԾ-ում:

*1. Սահմանամերձ շրջաններում տեղական համայնքների կենսապայմանների բարելավում՝ տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացման միջոցով:*

Գերակայությունների մի քանի օրինակ, որոնք կարող են հասցեագրվել ծրագրերի գործառնական նպատակ I-ի ներքո.

- բարձրացնել տեղական համայնքների մրցունակությունը՝ (i) բարելավելով բիզնես ծառայությունների, օրինակ՝ տնտեսական կարգավորման (հարկեր, մաքսեր, ներմուծման և արտահանման կանոններ) վերաբերյալ տրամադրվող տեղեկատվության որակը; (ii) ստեղծելով միջսահմանային գործարար ցանցեր և (iii) վերապատրաստելով տեղացի ձեռներեցներին;
- մշակել համատեղ զբոսաշրջային ուղիներ՝ հիմնված ընդհանուր բնական ռեսուրսների, ինչպես նաև պատմական և մշակութային ժառանգության վրա;
- մշակել ընդհանուր լուծումներ սահմանամերձ շրջաններում առկա սոցիալական հիմնահարցերի, մասնավորապես՝ երիտասարդների գործազրկության և «ուղեղների արտահոսքի», տեղական մակարդակում կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների հասանելիության վերաբերյալ:

Միջոցառումների օրինակներ՝

- ՓՄՁ/գործարարության/գյուղատնտեսության/գյուղական զարգացմանն ուղղված համատեղ նախաձեռնություններ, ներառյալ գործարար կապերի և ձեռնարկատիրական ցանցերի հաստատում;

- տեղական համայնքների կրթական, սոցիալական և այլ կարիքների բավարարմանն ուղղված սոցիալական ծրագրեր;
- զարգացման և պլանավորման համատեղ փաստաթղթերի մշակում;
- ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրերի համար իրագործելիության ուսումնասիրությունների և դիմում-հայտերի փաթեթների մշակում, եթե ցույց տրվի ենթակառուցվածքների կառուցման համար առկա ֆինանսավորման հնարավորություններ;
- սահմանամերձ շրջանների միջև ֆիզիկական կապի ապահովման և հասանելիության բարելավմանն ուղղված ենթակառուցվածքների կառուցման փոքրամասշտաբ ծրագրեր;
- համատեղ զբոսաշրջային ուղիների, ծառայությունների և ռազմավարությունների մշակում:

*II. Սահմանամերձ շրջաններում առկա բնապահպանական, զբաղվածության, հանրային առողջապահության և ընդհանուր հետաքրքրության առարկա հանդիսացող ցանկացած այլ հիմնահարցի ընդհանուր մարտահրավերների հաղթահարում:*

Գերակայությունների մի քանի օրինակ, որոնք կարող են հասցեագրվել ծրագրերի գործառնական նպատակ II-ի ներքո.

- խրախուսել հատուկ պահպանվող տարածքների և բնական ռեսուրսների համատեղ կառավարումը՝ տեղեկատվության փոխանակման, պահպանության և հարևան տարածք(ներ)ի վրա ներազդող օդի ու ջրի աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումների համակարգման միջոցով;
- ամրապնդել արտակարգ իրավիճակների ծառայությունների միջսահմանային կապը՝ այնպիսի ընդհանուր մարտահրավերների լուծման համար, ինչպիսիք են անդրսահմանային հեղեղները, անտառային հրդեհները, օդի և ջրի աղտոտվածությունը;
- հաստատել և զարգացնել անմիջական կապ սահմանի երկու կողմերում գործող տեղական և շրջանային կազմակերպությունների և մասնագետների միջև:

Միջոցառումների օրինակներ՝

- բնական ռեսուրսների (օրինակ՝ ջրային ռեսուրսների) և պահպանվող տարածքների համատեղ մշտադիտարկում և կառավարում;
- միջսահմանային բնապահպանական տվյալների փոխանակման համակարգերի ստեղծում;

- օրի աղտոտվածության դեմ պայքարելու և տնտեսական գործունեության բացասական հետևանքները վերացնելուն ուղղված համատեղ կամ համակարգված միջոցառումներ;
- սահմանամերձ փոքրամասշտաբ բնապահպանական ենթակառուցվածքների կառուցում;
- թափոնների կառավարման, էներգախնայողության և այլ որոտներում համատեղ միջոցառումներ և այլն;
- սահմանամերձ շրջաններում բնապահպանական հիմնահարցերի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացմանն ուղղված քարոզարշավներ;
- աղտոտված տարածքների վերականգնմանն ուղղված համատեղ ռազմավարությունների և միջոցառումների մշակում;
- տեղական և տարածքային բնապահպանական կազմակերպությունների համագործակցության խթանմանն ուղղված համատեղ միջոցառումներ;
- բնական և մարդածին աղետներին արձագանքելու տեղական և տարածքային պատրաստվածության բարձրացում;
- փրկարար ծառայությունների համագործակցություն, ներառյալ համատեղ վարժանքներն ու ուսուցումները;
- Չեռնոբիլի ատոմակայանի աղետի ազդեցությունը վերացնելուն ուղղված համատեղ միջոցառումներ (վերաբերվում է միայն Ուկրաինա- Բելառուս ծրագրին);
- Կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների բարելավմանն, ինչպես նաև այդ ծառայությունները մատուցող հաստատությունների և մասնագետների միջև համագործակցության սերտացմանն ուղղված միջոցառումներ;
- խոցելի և մարգինալացված սոցիալական խմբերի սոցիալական աջակցության և ներառման այնպիսի համատեղ ռազմավարությունների/փորձական ծրագրերի իրականացում, որոնք կնպաստեն համատեղ միջոցառումներում խոցելի խմբերի ներգրավմանը;
- համագործակցություն վարակիչ հիվանդությունների կանխարգելման, մշտադիտարկման և բուժման նպատակով:

### *III. Մշակույթ, կրթություն և սպորտ*

Գերակայությունների մի քանի օրինակ, որոնք կարող են հասցեագրվել ծրագրերի գործառնական նպատակ III -ի ներքո.

- խրախուսել համատեղ մշակութային/սպորտային միջոցառումները և հանդիպումները՝ որպես սահմանամերձ շրջանների բնակիչների մերձեցման միջոց;
- մեծացնել կազմակերպությունների միջսահմանային համագործակցությունը և հաղորդակցության փոխանակումը;
- խրախուսել մշակութային բազմազանությունը:

Առանձնահատուկ կշեշտադրվեն բնակիչների անմիջական ներգրավվածությամբ միջոցառումները, որոնք ուղղված կլինեն վերոնշյալ երեք գերակայությունների շրջանակներում տեղական մակարդակում կապերի ամրապնդմանը:

Միջոցառումների օրինակներ՝

- մշակութային համագործակցության ամրապնդում (օրինակ՝ ինստիտուտների միջև համագործակցություն, երիտասարդների մշակութային փոխանակման միջոցառումներ, մշակութային ժառանգության պահպանություն);
- ավանդական ձեռագործության զարգացում;
- տեղեկատվության փոխանակման ծավալների աճ (օրինակ՝ միասնական տեղեկատվություն սահմանային տարածքի մասին, տեղեկատվության ոլորտի մասնագետների համագործակցության ցանց);
- համատեղ մշակութային և պատմական ուսումնասիրություններ և հետազոտություններ, ինչպես նաև մշակութային հուշարձանների տվյալների միասնական բազայի/ռեգիստրի ստեղծում և այլն;
- մշակութային և պատմական ժառանգության հուշարձանների վերանորոգման փոքրամասշտաբ աշխատանքներ;
- կրթական համագործակցության խրախուսում (օրինակ՝ միասնական կրթական ծրագրեր);
- համատեղ սպորտային և այլ միջոցառումներ՝ երիտասարդների համար ժամանցային հնարավորություններ ստեղծելու նպատակով;
- ինստիտուտների միջև համագործակցության խրախուսում (օրինակ՝ հաղորդակցության և համագործակցության հիմնական համաձայնագրերի ստորագրում):

## 5. ԹԻՐԱԽ ԽՄԲԵՐ

Ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ

- **պետական կառույցները.** տեղական և տարածքային իշխանությունները և հանրային ծառայություններ մատուցողները, ինչպիսիք են հիվանդանոցները,

կրթական, հետազոտական և մշակութային հաստատությունները, համայնքային ծառայություններ մատուցողները, ասոցիացիաները;

- **ոչ-պետական դերակատարները.** քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ԶՅԿ-ներ)՝ իրենց ողջ բազմազանությամբ, ինչպիսիք են՝ անկախ քաղաքական և հետազոտական հիմնադրամները, քաղաքացիական նախաձեռնությունները և միությունները, երիտասարդական կազմակերպությունները, ՓՄՁ ասոցիացիաները:

Հարևան երկրների հետ տարածքային համագործակցության խթանմամբ հետաքրքրված ազգային մակարդակում որոշումներ ընդունողները ևս հանդիսանում են շահագրգիռ կողմ: Այս խումբը բաղկացած է օրենսդիր, ինչպես նաև տնտեսական, տարածքային, ենթակառուցվածքների (եթե առկա է), ինչպես նաև բնապահպանության զարգացման համար պատասխանատու գործադիր մարմինների ներկայացուցիչներից: Այս խմբի ներկայացուցիչները իրենց աջակցությունը կցուցաբերեն համապատասխան տարածքային համագործակցության ծրագրերի գերակայությունների և միջոցառումների սահմանման հարցում:

ԱԼԳ Տարածքային համագործակցության յուրաքանչյուր ծրագրի մեջ պետք է ներառված լինեն պետական կառույցների ներկայացուցիչներ և ոչ-պետական դերակատարներ: Տարածքային համագործակցության ծրագրերի համար աջակցություն ստանալու նպատակով շահառուները պետք է ունենան նմանօրինակ ծրագրեր մշակելու և հաջողությամբ իրականացնելու կարողություն: Շահառուներին ներկայացվող մանրամասն պահանջները կսահմանվեն ՀԳԾ-ներում, ինչպես նաև դիմորդների ուղեցույցում:

ԱԼԳ Տարածքային համագործակցության ծրագրերը կաջակցեն միայն շահույթ չհետապնդող գործողությունների իրականացմանը:

**6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ**

ԱԼԳ Տարածքային համագործակցության չորս ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմելու է 9.3 միլիոն եվրո: Ստորև ներկայացված է տարածքային համագործակցության չորս ծրագրերի մոտավոր բաշխումը՝ ըստ մասնակից շրջանների բնակչության թվի, տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակի և ծրագրերի իրականացման կարողության:

<b>Արևելյան գործընկերության համագործակցության ծրագիր</b>	<b>Տարածքային</b>	<b>Հատկացվող (միլիոն €)</b>	<b>բյուջե</b>
Ուկրաինա – Բելոռուս			3.30
Մոլդովա-Ուկրաինա			3.30
Վրաստան-Հայաստան			1.35



Վրաստան-Ադրբեջան	1.35
<b>Ընդամենը</b>	<b>9.30</b>

Ֆինանսավորման իրական բաշխումը կարող է տարբերվել վերոնշյալից՝ կախված ԱլԳ Տարածքային համագործակցության յուրաքանչյուր ծրագրի շրջանակներում ներկայացված ծրագրերի առաջարկների որակից և նոգ կման ոլորտներից: Այդ տարբերությունները պետք է հաստատվեն Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ Իրականացնող մարմնի (ԻՄ) կողմից արված առաջարկության հիման վրա (տե՛ս կետ 7.3-ը):

Ընտրված գործառնական ծրագրերի մեջ Եվրոպական միության ներդրումը չպետք է գերազանցի դրանց նդհանուր ծախսերի 90 տոկոսը: Ծրագրի շահառուները պետք է ֆինանսավորեն ծրագրային ծախսերի առնվազն 10 տոկոսը:

## 7. ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

### 7.1. Համատեղ գործառնական ծրագրեր (ՅԳԾ-ներ)

Մասնակից երկրները կմշակեն իրենց Համատեղ գործառնական ծրագիրը (ՅԳԾ)՝ նկարագրելու (i) այն մարտահրավերները, որոնք վերջիններս պատրաստվում են համատեղ ջանքերով հաղթահարել ներառված սահմանամերձ շրջաններում, (ii) ծրագրի գերակայությունները և միջոցառումները, (iii) հատկացված ֆոնդերի մոտավոր բաշխումը յուրաքանչյուր գերակայության համար, (iv) դիմորդներին ներկայացվող պահանջները, (v) ծրագրի իրականացման շրջանակները և մշտադիտարկման գործիքները<sup>4</sup>:

ՅԳԾ-ն հաստատվելու է Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողովի (ՀՈԸՀ) կողմից (տե՛ս կետ 7.2-ը) և համաձայնեցվելու է Եվրոպական հանձնաժողով հետ:

ԱլԳ Տարածքային համագործակցության աջակցության ծրագիրը (տե՛ս կետ 9-ը) կարող է օժանդակություն ցուցաբերել համագործակից պետություններին ՅԳԾ-ների մշակման գործում: Այս ընթացքում անհրաժեշտ է նաև խորհրդակցել Իրականացնող մարմնի հետ:

ԱլԳ Տարածքային համագործակցության չորս ծրագրերի համար Եվրոպական հանձնաժողովը կնշանակի Իրականացնող մարմին: Մասնակից երկրները իրենց ծրագրի համար կստեղծեն մեկ ՀՈԸՀ:

<sup>4</sup>Հղումներ կարող են կատարվել տարածաշրջանային և/կամ տեղական զարգացման փաստաթղթերին /եթե այդպիսիք առկա են/: Պետք է նկարագրվի Համատեղ գործառնական ծրագրերի և ազգային/տեղական համապատասխան ռազմավարությունների համապատասխանության աստիճանը:

## **7.2. Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողով (ՀՈՇՀ)**

ՀՈՇՀ-ում համագործակցելու են յուրաքանչյուր մասնակից երկրի կենտրոնական իշխանությունների, տեղական իշխանությունների և ՔՀԿ-ների ներկայացուցիչները, ներառյալ՝ Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ազգային պլատֆորմի անդամները: ՀՈՇՀ-ի աշխատանքներին կարող են նաև իրենց նախաձեռնությամբ մասնակցել Եվրոպական միության, ԻՄ-ի և ԱԳ Տարածքային համագործակցության աջակցության ծրագրի ներկայացուցիչները՝ դիտորդի կարգավիճակով: ՀՈՇՀ-ը կապահովի ծրագրի նկատմամբ մասնակից շրջանների սեփականության զգացումը:

ՀՈՇՀ-ը կիրականացնի հետևյալ գործառնությունները՝

- հաստատել տարածքային զարգացման ծրագրի նպատակները և գերակայությունները նկարագրող ՀԳԾ-ն;
- որոշում կայացնել ծրագրի ռեսուրսների օպտիմալ բաշխման վերաբերյալ՝ ելնելով տարածքային համագործակցության գերակայություններից,
- կարծիք հայտնել ծրագրում ցանկացած փոփոխություն կատարելու առաջարկների վերաբերյալ, որոնք կարող են ներկայացվել Եվրոպական հանձնաժողովի և/կամ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից, քանզի համաձայն Եվրոպական հանձնաժողովի և ԳՄՀԸ-ի միջև 16.12.2013թ.-ին կնքված պատվիրակման համաձայնագրի Եվրոպական հանձնաժողովը Իրականացնող մարմին է նշանակել ԳՄՀԸ-ին,
- Եվրոպական հանձնաժողովի հետ մեկ տեղ կարծիք հայտնել ԻՄ-ի կողմից մշակված դիմորդների ուղեցույցի վերաբերյալ,
- վերջնական որոշում կայացնել ծրագրի գնահատման արդյունքների վերաբերյալ, որը պետք է հաստատվի Եվրոպական հանձնաժողովի կողմից,
- հետևել ծրագրի իրականացման առաջընթացին;
- ծանոթանալ ԻՄ-ի կողմից ներկայացված հաշվետվություններին:

ՀՈՇՀ-ը կարող է ստեղծվել սահմանակից երկրների միջև գործող տնտեսական համագործակցության երկկողմ միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում, կամ մասնակից երկրների համար ընդունելի ցանկացած այլ շրջանակում: Կարևոր է, որպեսզի ապահովվի ՀՈՇՀ-ում ազգային, մարզային և տեղական իշխանությունների, ինչպես նաև ՔՀԿ-ների համաչափ ներկայացվածությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն էրը ԱԼԳ Տարածքային համագործակցության աջակցության ծրագրի օժանդակությամբ կխորհրդակցեն շահագրգիռ կողմերի հետ՝ սահմանելու ԱԼԳ Տարածքային համագործակցության յուրաքանչյուր ծրագրի գերակայությունները, որոնք կներառվեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեջ: ՅՈՒՆԵՍԿՕ-ն էրը խորհրդակցությունների փուլում կապահովեն ազգային, մարզային և տեղական իշխանությունների համաչափ մասնակցությունը: Պետք է նաև ապահովվի տեղական և մարզային իշխանությունների, ինչպես նաև ՔՅԿ-ների կողմից սեփականության զգացումը գործընթացի նկատմամբ:

### 7.3. Իրականացնող մարմին (ԻՄ)

ԱԼԳ Տարածքային համագործակցության ծրագրերն իրականացվելու են ԳՄՅԸ-ի (Գերմանական միջազգային համագործակցության ընկերության) կենտրոնացված կառավարմամբ, որը և կհանդիսանա Իրականացնող մարմինը:

ԻՄ-ը պատասխանատու է լինելու ԱԼԳ Տարածքային համագործակցության ծրագրերի գործառնական և ֆինանսական կառավարման համար:

ԻՄ-ը կարող է պայմանագրեր ստորագրել դրամաշնորհների շահառուների հետ Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորման ենթակա ընտրված ծրագրերի վերջնական ցանկի հաստատումից հետո միայն:

Երոպական հանձնաժողովը և ԻՄ-ը խորհրդատվություն կտրամադրեն ՅՈՒՆԵՍԿՕ-ն էրին:

## 8. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱԼԳ Տարածքային համագործակցության ծրագրերի նախապատրաստման և մեկնարկի ինդիկատիվ օրացույց.

Խորհրդակցություններ շահագրգիռ կողմերի հետ՝ ծրագրերի գերակայությունները վերհանելու նպատակով	2013թ. սեպտեմբեր-հոկտեմբեր
Համատեղորոշումների ընդունման հանձնաժողովների ստեղծում	2013թ. նոյեմբեր
Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորման վերաբերյալ որոշման ընդունում	2013թ. նոյեմբերի 22
Համատեղ գործառնական ծրագրերի ընդունում	2014թ. ապրիլ-մայիս
Ծրագրերի առաջարկներին երկայացման մասին հայտարարություն	2014թ. հունիս-հուլիս

ԱԿՏարածքային համագործակցության ծրագրերի իրականացման մոտավոր ժամկետը 60 ամիս է, որը կարող է փոփոխվել՝ Եվրոպական հանձնաժողովի և ԻՄ-ի հետ համաձայնեցնելու արդյունքում: Այն ներառում է Եվրոպական հանձնաժողովի և ԳՄՐԸ-ի միջև պատվիրակման համաձայնագրի ստորագրումից մինչև ծրագրերի ավարտն ընկած ժամանակահատվածը:

Ընտրված ծրագրերի իրականացման առավելագույն ժամկետը նշված կլինի ծրագրի հայտեր ներկայացնելու հայտարարարություններից յուրաքանչյուրի ուղեցույցում: Ծրագրերը պետք է իրականացվեն հայտարարություններում նշված ժամանակահատվածում և ծրագրային բոլոր գործողությունները պետք է իրականացված լինեն մինչև ծրագրերի ավարտը:

## **9. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՁ ԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՐԱԳԻՐ**

Եվրոպական հանձնաժողովը մեկնարկել է Արևելյան գործընկերության (ԱԿԳ) Տարածքային համագործակցության աջակցության ծրագիրը 2012թ. դեկտեմբերին՝ (ա) ԱԿԳ Տարածքային համագործակցության ծրագրերի համար բարենպաստ միջավայր ստեղծելու և (բ) տարածքային համագործակցության ծրագրեր մշակելու և իրականացնելու նպատակով տեղական և մարզային պետական կառույցների, ինչպես նաև ոչ-պետական դերակատարների կարողությունների հզորացման համար:

ԱԿՏարածքային համագործակցության աջակցության ծրագիրը կատարել է կես 5-ում նկարագրված ծրագրի շահառուների քարտեզագրում և նրանց կարողությունների նախնական վերլուծություն: Բացի այդ, այն նաև իրականացրել է կարողությունների զարգացման միջոցառումներ՝ ծրագրերի մշակման և իրականացման համար շահագրգիռ կողմերին նախապատրաստելու նպատակով: ՀՈԸՅ անդամները ԱԿԳ Տարածքային համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման վերաբերյալ ցանկացած հարցով կարող են դիմել ԱԿԳ Տարածքային համագործակցության աջակցության ծրագրին: Ի լրումն կարողությունների զարգացման իր դերի՝ ԱԿԳ Տարածքային համագործակցության աջակցության ծրագիրը իրականացնում է նաև հաղորդակցության և տեսանելիության ապահովման միջոցառումներ՝ բարձրացնելու հանրային ընդհանուր իրազեկվածության մակարդակը ԱԿԳ Տարածքային համագործակցության ծրագրերի և տարբեր միջոցառումներին մասնակցելու՝ շահագրգիռ կողմերին ներկայացվող հնարավորությունների վերաբերյալ: